Հաստատում եմ՝
Տնօրեն՝ Վ. Սիմոնյան
«01» 09 2022թ.

Երաշխավորում եմ՝
Ուսումնական գծով փոխտնօրեն՝ Ա. Խաչատրյան
«01» 09 2022թ.

Բնագիտական հոսքի մեթոդմիավորման 2022-2023թ. ուս.տարվա
Աշխատանքային պլան

Օգոստոս

1. 2022-2023 ուս. տարվա առաջին կիսամյակի բնագիտական առարկաների (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն) դասաբաշխման քննարկում:

Զեկուցող՝ Ա. Խաչատրյան

2. X-XII դասարաններում բնագիտական առարկաների, թեմատիկ պլանների քննարկում և հաստատում:

Զեկուցող՝ Ա. Խաչատրյան

3. 2022-2023 ուս. տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:

Զեկուցող՝ Ա. Պետրոսյան

4. Ուսումնական պլան ծրագրերին համապատասխան՝ դասագրքերի և խնդրագրքերի կիրառման հայեցակարգը (նշել օգտագործվող դասագրքերի և խնդրագրքերի անվանումները):

Զեկուցող՝ Ա. Պետրոսյան

5. 2022-2023 ուս. տարում ֆիզիկայի դասավանդման պրոցեսում բացթողումների և թերությունների (բովանդակային և որակական առումով) վերլուծությունը և նոր ուսումնական տարում այդ ուղղությամբ խնդիրները:

Զեկուցող՝ Ա. Պետրոսյան

Սեպտեմբեր

1. Թեմատիկ, ամփոփիչ, տնօրինության և ռեկտորատի կողմից տրվող գրավոր աշխատանքների անցկացման կարգի մասին:

Զեկուցող՝ Ա. Պետրոսյան

2. Էլեկտրոնային դասամատյանների լրացման հայեցակարգը:

Զեկուցող՝ Ա. Խաչատրյան

3. Մեթոդական զեկուցումների ցանկի հաստատում (կից ներկայացվում է):

Զեկուցող՝ Ա. Պետրոսյան

4. Փոխադարձ դասալսումների և համակարգչային դասերի անցկացման գրաֆիկի հաստատում:

Հոկտեմբեր

1. Փոխադարձ դասալսումների և համակարգչային դասերի անցկացման գրաֆիկի հաստատում:
2. X-XII դասարաններում «Ֆիզիկա» և «Քիմիա» առարկաներից լաբորատոր աշխատանքների թեմատիկայի հաստատում:
3. Բնագիտական առարկաներից բաց դասերի անցկացման հայեցակարգի մասին:
4. Մեթոդական զեկուցում (ֆիզիկա):

Զեկուցող՝ Ա. Պետրոսյան

Նոյեմբեր

1. Բնագիտական առարկաներից (քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն) սովորողների մրցույթի (վիկտորինա) կազմակերպում և անցկացումը:

Զեկուցող՝ Ա. Պարոնյան, Զ. Անտոնյան, Գ. Ղուշչյան

2. X-XII դասարաններում «Ֆիզիկա» առարկայից տրված թեմատիկ և X-XI դասարաններում տնօրինության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփում:

Զեկուցող՝ Ա. Պետրոսյան

3. Մեթոդական զեկուցման քննարկում (քիմիա):

Զեկուցող՝ Ա. Պետրոսյան

4. X-XI հոսքային դասարաններում ծրագրային նյութի դասավանդման ընթացքում լուծված խնդիրների (ըստ թվաքանակի և բարդության) արդյունքների քննարկում:

Զեկուցող՝ Գ. Խաչատրյան

Դեկտեմբեր

1. Բնագիտական առարկաների ամփոփիչ գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփում:

Զեկուցող՝ Ա. Պետրոսյան

2. Առաջին կիսամյակում սովորողների հաճախումների և բնագիտական առարկաներից ուսման առաջադիմության արդյունքների ամփոփում:

Զեկուցող՝ Ա. Խաչատրյան

3. X-XI հոսքային դասարաններում ռեկտորատի և տնօրինության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփում:

Զեկուցող՝ Ա. Պետրոսյան

4. Ներդպրոցական օլիմպիադայի արդյունքների ամփոփում (ֆիզիկա):

Զեկուցող՝ Ա. Պետրոսյան

5. Առաջին կիսամյակում փոխադարձ դասալսումների արդյունքների ամփոփում:

Զեկուցող՝ Ա. Պետրոսյան

6. Մեթոդական զեկուցման քննարկում (ֆիզիկա):

Զեկուցող՝ Գ. Խաչատրյան

Հունվար

1. Երկրորդ կիսամյակում բնագիտական առարկաների դասաբաշխում:

Զեկուցող՝ Ա. Խաչատրյան

2. Առաջին կիսամյակում բնագիտական առարկաներից համակարգչային դասերի անցկացման արդյունքների ամփոփում և երկրորդ կիսամյակում համանման դասերի անցկացման գրաֆիկի հաստատում:

Զեկուցող՝ Գ. Խաչատրյան

3. Փոխադարձ դասալսումների գրաֆիկի հաստատում (II կիսամյակ):

Զեկուցող՝ Ա. Պետրոսյան

4. Մեթոդական զեկուցում (կենսաբանություն):

Զեկուցող՝ Զ. Անտոնյան

Փետրվար

1. X-XII դասարաններում բնագիտական առարկաներից առաջին կիսամյակում անցկացված լաբորատոր և գործնական աշխատանքների արդյունքների ամփոփում և II կիսամյակի թեմատիկայի հաստատում:

Զեկուցող՝ Ծ. Սմբատյան, Զ. Անտոնյան, Ա. Պարոնյան, Գ. Ղուշչյան

2. Մեթոդական զեկուցման քննարկում (ֆիզիկա):

Զեկուցող՝ Ն. Գալոյան

3. Սովորողների մրցույթի անցկացումը «Ֆիզիկա» առարկայից:

Զեկուցող՝ Ա. Պետրոսյան

Մարտ

1. «Ֆիզիկա» առարկայից սովորողների մրցույթի արդյունքների ամփոփում:

Զեկուցող՝ Ա. Պետրոսյան

2. Մեթոդական զեկուցման քննարկում (Աշխարհագրություն):

Զեկուցող՝ Գ. Ղուշչյան

Ապրիլ

1. Առաջին եռամսյակում բնագիտական առարկաների ուսումնական պլան ծրագրերի կատարողական կատարողականի ստուգում և արդյունքների ամփոփում:

Զեկուցող՝ Լ. Առուստամյան

2. Մեթոդական զեկուցում «Ֆիզիկա»:

Զեկուցող՝ Ծ. Սմբատյան

Մայիս

1. «Ֆիզիկա» առարկայից փոխադրական քննությունների անցկացման ընթացակարգի մասին:

Զեկուցող՝ Ա. Պետրոսյան

2. Ամփոփիչ գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփում:

Զեկուցող՝ Ա. Պետրոսյան

3. Երկրորդ կիսամյակում սովորողների հաճախումների և բնագիտական առարկաներից ուսման առաջադիմության արդյունքների ամփոփում:

Զեկուցող՝ Ա. Խաչատրյան

4. Մեթոդական զեկուցում (կենսաբանություն):

Զեկուցող՝ Հ. Ավագյան

Հունիս

1. «Ֆիզիկա» առարկայից փոխադրական քննությունների արդյունքների ամփոփում:

Զեկուցող՝ Ա. Պետրոսյան

Ծանոթություն

Ուսուցիչների կողմից առարկայական չափորոշիչների կատարողականը

ա)Կազմակերպել բաց դասեր, դասալսումներ:

բ)Քննարկել, վերլուծել, համադրել և գնահատականներ տալ դասապրոցեսին:

գ)Կազմակերպել բնագիտական առարկաներից դաս էքսկուրսիաներ և դասադիտումներ՝ մեր շրջապատում ընթացող բնության երևույթների ուսումնասիրման համար:

դ)Բավարար չափով օգտագործել եղած առկա ռեսուրսներն ու միջոցները, անընդհատ դրանք հարստացնելով (գրքեր, պլակատներ, ձեռնարկներ և այլն):

ե)Հետևել ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման գործընթացին և խրախուսել նրանց մասնակցությանը մեթոդական սեմինարներին:

զ)Օգնել նորանշանակ և երիտասարդ ուսուցիչներին փորձի փոխանակման, հմտանալու, աշխատաժամանակը ինտենսիվ օգտագործելու, իրենք իրենց վրա աշխատելու, ժամանակակից ուսումնական մեթոդներ կիրառելու ուղղությամբ:

է)Անցկացնել կարճատև խորհրդակցություններ ընթացքում ծագած հարցերին լուծում տալու համար:

ը)Պարբերաբար ստուգել X և XI հոսքային դասարաններում ֆիզիկայի դասավանդման պրոցեսում լուծված խնդիրների թվաքանակը և բարդությունը:

Կից ներկայացվում է մեթոդական զեկուցումների ցանկը:

Մ/մ նախագահ՝ Ա. Պետրոսյան